

ԲԱԺԻՆ 1. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ
РАЗДЕЛ 1: ТЕОРИЯ ПЕДАГОГИКИ
SECTION 1: THEORY OF PEDAGOGY

378.4(479.25)

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Խաչատրյան Ռոբերտ

*Վ. Բոյունովի անվան պետական համալսարան,
Հայաստան*

Համառոտ ներածական: ՀՀ պետականության ամրապնդումը և գիտելիքահենք տնտեսության կայուն զարգացումը պայմանավորված են համաշխարհային տնտեսական շուկայում ՀՀ կրթության և գիտության համակարգերի մրցունակության բարձրացմամբ: Այս համատեքստում պետության կարևորագույն գործառնություններից է գիտելիքահենք հասարակության և տնտեսության ձևավորման ու շարունակական զարգացման ապահովումը: Նմանատիպ գործընթացներում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունները և գիտահետազոտական կազմակերպությունները հանդես են գալիս որպես հայկական պետականությունն ամրապնդող հենասյուն, հայկական քաղաքակրթական ժառանգության պահպանման ու սերունդներին փոխանցման, պետականամետ գաղափարների գործադրման, նորարարությունների ու ստեղծագործական մտքի խթանման, մրցունակ մտավոր կապիտալի, մասնագիտական և գիտական գիտելիքների ստեղծման ու տարածման առանցքային դերակատարներ: Վերջիններս շարքում են նաև հետազոտական համալսարանները, քանի որ դրանք ստեղծում են մտավոր կապիտալ, զարգացնում են ուսումնառողների գիտական ներուժը, նրանց փոխանցելի (առաջնորդման ու հետազոտման) կարողությունները, տեխնոլոգիական ռեսուրսները, ինչպես նաև նոր գիտելիք են ստեղծում ժամանակակից գիտության ու մրցունակ գիտելիքահենք հասարակության զարգացման համար և ամենակարևորը՝ համաշխարհային մակարդակում հաղորդակցում ու համագործակցային կապերն ապահովող օղակ են: Այս համատեքստում ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծումն ու դրանց գիտահետազոտական գործունեության արդյունքների արդյունավետ կիրառումը կարող են էապես նպաստել ՀՀ-ում սոցիալ-տնտեսական, գիտական ու կրթական մի շարք փոխկապակցված հիմնախնդիրների լուծմանը:

Բանալի բառեր: Հետազոտական համալսարան, գիտելիքահենք տնտեսություն, ռազմավարական զարգացում, բարձրագույն կրթություն, գիտական անձնակազմ, գիտական գիտելիք:

Հիմնախնդիրը: Հետազոտական համալսարանները 21-րդ դարի գիտելիքահենք տնտեսությունը զարգացնող առանցքն են, որոնք ոչ միայն պատրաստում են մասնագետներ, այլև գիտական հանրության համար ստեղծում են գիտական տեղեկության փոխանցման և հաղորդակցման հարթակ [5, էջ 67-70]: Հետազոտական համալսարանների առաջնային գործառնություններից են մրցունակ գիտական անձնակազմի պատրաստումն ու նրանց գիտահետազոտական գրագիտության մակարդակի բարձրացումը, ինչպես նաև գիտահետազոտական արդյունքների ստեղծումն ու տարածման մշակութային զարգացումը: Հետազոտական համալսարանները բարձրագույն կրթության ոլորտի այն առանցքային դերակատարներն են, որոնք խթանում են երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը՝ հիմնարար հետազոտությունների իրականացման միջոցով էապես նպաստելով գիտական ու տեխնոլոգիական ոլորտների զարգացմանը: Հետազոտական համալսարաններն իրենց գործունեության տարբեր ոլորտներում կուտակված փորձն ու գիտական գիտելիքները համալրում են գիտահետազոտական նոր արդյունքներով, ստեղծում են գիտելիքահենք տնտեսության զարգացման նոր ռազմավարություններ և

հանրային բարիքներ [3]՝ դրանք ծառայեցնելով գիտությանը, կրթությանը, աշխատաշուկայի և հանրության պահանջներին ու կարիքներին:

Հիմնախնդրին առնչվող արդիական այլ հետազոտությունների և հրատարակությունների կարճ վերլուծություն: Հողվածի մեթոդաբանական հենքը ներառում է ոչ միայն մասնագիտական գրականության [1-5], այլ նաև միջազգային լավագույն փորձի օրինակների դիտարկումների ու վերլուծությունների արդյունքները: Սույն հողվածի թեմայի շրջանակում ոլորտային առկա խնդիրների վերհանման և վերլուծության նպատակով ուսումնասիրվել է ՀՀ 20 պետական և ոչ պետական բուհերի գիտահետազոտական գործունեությունը: Սույն հետազոտության մեթոդաբանությունը ներառում է նաև նշված բուհերի ռազմավարությունների, գործունեության առանցքային ցուցանիշների (առկայության դեպքում), գործունեության տարեկան և ֆինանսական հաշվետվությունների, ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունների ու փորձագիտական զեկույցների և այդ բուհերի պաշտոնական կայքերում հասանելի այլ փաստաթղթերի համապարփակ ուսումնասիրությունը: Ի լրումն ՀՀ բուհերի փաստաթղթերի և գիտահետազոտական գործունեության շրջանակն արտացոլող այլ նյութերի ուսումնասիրության՝ իրականացվել են նաև հարցազրույցներ այդ համալսարանների գիտական անձնակազմի¹ և գիտության ոլորտի պատասխանատուների հետ: Հարցազրույցների և փաստաթղթային հենքի վերլուծության արդյունքների համակցումը թույլ է տվել դուրս բերել սույն հետազոտության շրջանակում քննարկված խնդիրները և հաստատել առաջադրված դրույթները:

Հողվածի նպատակը: Հաշվի առնելով հետազոտական համալսարանների առանցքային դերն ու կարևորությունը ՀՀ-ում գիտելիքահենք տնտեսության զարգացման գործում՝ սույն հողվածի նպատակն է քննել և հիմնավորել ՀՀ-ում հետազոտական համալսարանների հիմնադրման անհրաժեշտությունն ու ռազմավարական նշանակությունը գիտահետազոտական, կրթական ու նորարարական ոլորտների առաջընթացի խթանման տեսանկյունից: Սույն հետազոտության նպատակը բխում է նաև ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծմանն առնչվող մարտահրավերների և գիտահետազոտական համակարգի արդյունավետության բարձրացման ուսումնասիրության անհրաժեշտությունից:

Հետազոտության նորույթը: Նորովի մեկնաբանվել և վերլուծության են ենթարկվել ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծման կարևորությունը և ռազմավարական նշանակությունը ՀՀ-ում գիտության, կրթության և գիտելիքահենք տնտեսությունների փոխկապակցվածության տեսանկյունից: ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծման միջոցով գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացումը մարտահրավեր է հատկապես այն պատճառով, որ ՀՀ կառավարությունը և համապատասխան այլ դերակատարներ թերացել են ինչպես գիտության և կրթության զարգացման տեսլականի մշակման, առաքելության իրականացման, այդ ոլորտների երկարաժամկետ զարգացման երաշխիքների ու թիրախային ֆինանսավորման ապահովման, այնպես էլ այդ ոլորտների արդյունավետության գնահատման և դրա արդյունքները գիտահանրամատչելի դարձնելու հարցում:

Հիմնական նյութի շարադրանքը: Կրթության համակարգի զարգացման օրինաչափությունները և ինտեգրումը միջազգային, հատկապես եվրոպական կրթական տարածքին թելադրում են բարձրագույն կրթության համակարգային և նպատակային բարեփոխումներ: 2005 թ. ՀՀ բարձրագույն կրթության համակարգի ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (ԵԲԿՏ)² մի շարք հնարավորություններ է ընձեռել բուհերին, սակայն գիտահետազոտական և նորարարական գործունեության բարելավման և այդ շրջանակի ընդլայնման տեսանկյունից ներկայումս նպատակահարմար է նաև ապահովել ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգերի ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին (ԵՀՏ)³: Այս երկարաժամկետ հեռանկարի գիտակցումն ու

¹ Գիտական անձնակազմը ներառում է հետևյալ խմբերի ներկայացուցիչներին՝ գիտնականներ, գիտաշխատողներ, գիտամանկավարժական կազմ, գիտական խորհրդատուներ, հետազոտողներ՝ դոկտորանտներ, ասպիրանտներ, հայցորդներ, գիտական աստիճան ունեցող և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող այլ դերակատարներ:

² Անգլերեն համարժեքը՝ European Higher Education Area (EHEA):

³ Անգլերեն համարժեքը՝ European Research Area (ERA):

իրականացումը ՀՀ-ում շարունակում են դեռևս ոչ ամբողջությամբ լուծված հիմնախնդիր մնալ և՛ պետական, և՛ ինստիտուցիոնալ մակարդակներում: Այս համատեքստում ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծման և ԵՀՏ-ին դրանց ինտեգրման նպատակները կարող են ՀՀ կառավարության կրթության և գիտության համակարգերի զարգացման գերակայություններից լինել:

ՀՀ բուհերի դանդաղ ինտեգրումը ԵԲԿՏ-ին և բարձրագույն կրթության գլոբալ բարեփոխումներին պայմանավորված է նաև համակարգային մի շարք հիմնարար խնդիրներով ու բացասական գործոններով, որոնցից են՝

- սոցիալ-տնտեսական համընդհանուր ճգնաժամն ու ժողովրդագրական ցուցանիշների անկումը, որը հանգեցնում է մտավոր կապիտալի ոչ բավարար ցուցանիշների՝ հետազայում սահմանափակելով մրցունակ գիտական անձնակազմի պատրաստման հնարավորությունները,
- կրթության և գիտության համակարգերի ինքնագոյատևումն առանց պետական կայուն ֆինանսական աջակցության,
- վերացարկումը երկրի իրական կարիքներից, պետության գերակայությունների և կրթության ու գիտության համակարգերի զարգացման միջև ոչ լիարժեք փոխկապակցվածությունը,
- պետության կողմից սահմանված որակավորումներին առաջադրվող պահանջների ոչ լիարժեք բավարարումը, ՀՀ բուհերի կողմից շուկայի իրական կարիքների անտեսումը,
- հարափոփոխ աշխատաշուկայում ՀՀ բուհերի շրջանավարտների ցածր պահանջարկը՝ պայմանավորված իրենց գիտելիքների ու հմտությունների մակարդակով,
- որակյալ կրթության հասանելիության ցածր մակարդակն ու կրթության ոլորտի արդի բարեփոխումներին անհամահունչ կրթության ու գիտության համակարգերը (օրինակ՝ դանդաղ արձագանք զարգացման միտումներին, ոչ արդի բովանդակությամբ կրթական ու հետազոտական ծրագրեր, գիտակրթական գործընթացներում նորարարական մոտեցումների ու ժամանակակից ՏՀՏ-ների ոչ թիրախային կիրառում, կրթական (ակադեմիական) գերբեռնվածություն), ինչն էլ հանգեցնում է աշխատաշուկայի և կրթական ծառայությունների անհամապատասխանության,
- կրթության կառավարման գործընթացներում հասարակության ու արտաքին շահակիցների ներգրավվածության և բարձրագույն կրթության արդյունքներից շահակիցների բավարարվածության ցածր ցուցանիշները,
- ՊԴ կազմի տարիքային բարձր ցուցանիշներն ու ՊԴ կազմի երիտասարդ ուղեղների արտահոսքը մասնավոր հատված կամ ՀՀ տարածքից դուրս,
- երիտասարդ մասնագետների, ներառյալ տաղանդների կառավարման անարդյունավետ համակարգը:

ՀՀ բուհերն իրականացնում են բարձրագույն և հետբուհական կրթություն՝ սպասարկելով հիմնականում ազգային աշխատաշուկան և ունենալով տարածաշրջանային ու միջազգային շուկաներում մրցունակ լինելու հեռանկար: ՀՀ-ում բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող օրենսդրությունում բուհերը սահմանված են որպես ակադեմիական կառույցների կարգավիճակ ունեցող հաստատություններ, որոնց գործառության շրջանակները ներառում են կրթական և գիտահետազոտական գործունեություն: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով [1] ակադեմիական և հետազոտական համալսարանների տարբերակում չկա, հետևապես հստակորեն սահմանված չեն բուհերի ուսումնակրթական ու գիտահետազոտական գործառույթները: ՀՀ-ում բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունները, անկախ իրենց կազմակերպարավական ձևից, սակայն իրենց կանոնադրական գործունեության շրջանակում, փաստացիորեն իրականացնում են ոլորտային գիտահետազոտական գործունեություն: Այդուհանդերձ, ՀՀ բուհերը փաստացիորեն իրականացնում են նաև գիտահետազոտական գործունեություն, սակայն դրանց գործառութային հիմնական շրջանակն ընդգրկում է ուսումնառությունն ու դասավանդումը և ոչ թե գիտական հետազոտությունը:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում տարանջատված չեն հետազոտական և ոչ հետազոտական համալսարանները, ՀՀ օրենքում համալսարանը ներկայացվում է որպես բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում սահմանված բուհերի տեսակներից մեկը, որի գործառնությունների շրջանակում ամրագրված որոշակի դրույթներ մատնանշում են համալսարաններում գիտահետազոտական գործունեության իրականացնելու իրավասությունն ու պարտավորությունը: Այդ դրույթներից կարելի է նշել տեղական ու միջազգային գիտակրթական և հետազոտական ծրագրերին մասնակցությունն ու իրականացումը, գիտական հետազոտությունների կատարումը, հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը (Հոդված 6, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետեր), հետազոտողի համար հետբուհական մասնագիտական կրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի իրականացումը (Հոդված 6, 4-րդ կետի 2-րդ ենթակետ) և այլն:

Հետազոտական համալսարաններն այն կառույցներն են, որոնց նպատակների և կանոնադրական գործառնությունների շրջանակը, կրթականից գատ, ներառում է գիտահետազոտական լայնածավալ գործունեություն: Հետազոտական համալսարանների հիմնական հանձնառությունը գիտահետազոտական արդյունքների ստեղծումն է հիմնված նորարարությունների, նորամուծությունների ու ստեղծարարության, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների կիրառման և հարակից ոլորտներում իրականացվող փորձարարական հետազոտական աշխատանքների վրա: Հետազոտական համալսարանների գիտահետազոտական գործունեության շրջանակը ներառում է գիտական հիմնարար ու կիրառական հետազոտություններ, փորձարարական և լաբորատոր աշխատանքներ, որոնց շնորհիվ շարունակաբար ստեղծվում են գիտական նոր արդյունքներ ու ծառայություններ, գործարկվում են նոր տեխնոլոգիաներ ու համակարգեր, խթանվում են գիտության առաջընթացը, նորարարությունն ու ոլորտի զարգացմանը նպաստող այլ գործընթացներ: Գիտահետազոտական արդյունքների ստեղծման վերոնշյալ գործընթացներն առավել արդյունավետորեն են իրականացվում, երբ ինտեգրվում են բարձրագույն կրթության համակարգին:

Հետազոտական համալսարանները, որպես կանոն, տարբեր կրթական համակարգերի մաս են կազմում և սոցիալական տարբեր դերակատարություններ ունեցող ու ֆինանսական տարբեր համակարգեր գործառող հաստատություններ են: Այն երկրներում, որտեղ համալսարանները տարանջատված չեն ըստ գիտահետազոտական և կրթական ոլորտների, դժվար է խթանել հետազոտական համալսարանների ստեղծումն ու գործառնումը, քանի որ դա ծախսատար է ու ռեսուրսատար [5, էջ 72, 78]: Այլ ուսումնական հաստատությունների համեմատ՝ հետազոտական համալսարաններ հիմնադրելն ու գործառնելը սովորաբար ավելի թանկ է, քանի որ հետազոտական համալսարանների գործունեությունը պահանջում է թանկարժեք գիտական սարքավորումներ, նյութատեխնիկական ռեսուրսներ, ներառյալ արագ զարգացող տեղեկատվական և այլ տեխնոլոգիաներ, համաշխարհային գիտական գիտելիքի աղբյուրներին հասանելիության ապահովում, ինչպես նաև գիտական աշխատողներին վճարելու համար անհրաժեշտ ավելի շատ ֆինանսական ռեսուրսներ, քան սահմանված է այլ ուսումնական հաստատություններում:

Հետազոտական համալսարանները միակ կառույցները չեն, որոնք գիտահետազոտական գործունեությամբ են զբաղվում. մասնագիտացված հետազոտական ինստիտուտները, պետության կողմից հիմնադրված լաբորատորիաները, գիտահետազոտական ու կորպորատիվ հետազոտական կենտրոններն ու այլ կառույցներ նույնպես իրականացնում են հետազոտություններ, և դրանցից շատերում ներգրավված են նաև միջազգային գիտական հանրույթի ներկայացուցիչներ: Մրցունակ տնտեսություններում հետազոտական համալսարանները տարբեր ինստիտուտներ ընդգրկող գիտահետազոտական բարդ համակարգ են կազմում: Հետազոտական համալսարանները թերևս ամենաարդյունավետ հետազոտություններ իրականացնող կառույցներն են: Ավելին, դրանք ֆորմալ կրթություն և վերապատրաստումներ են իրականացնում ուսումնառողների հետազոտողների, գիտնականների ու մասնագետների համար՝ երիտասարդ կադրերին ընձեռնելով մի շարք առավելություններ: Բարձր առաջադիմությամբ ուսումնառողների (հիմնականում հետբուհական/դոկտորական մակարդակում) ներուժի զարգացումն ու մրցունակ հետազոտության

իրականացումն արժեքավոր գիտելիքի կուտակման ու փոխանցման հնարավորություններ են ստեղծում [5, էջ 74]:

ՀՀ կրթության համակարգում հետազոտական համալսարանների ստեղծումը կարող է զգալիորեն խթանել ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացումը՝ փոխկապակցելով գիտության, կրթության ու արտադրության համակարգերը: Այդ համակարգերի շղթայական կապը կարող է ամրապնդվել գիտելիքահենք տնտեսության զարգացման գործընթացներում հետազոտական համալսարանների գործունեության արդյունքների ներդրմամբ՝ միտված սոցիալ-տնտեսական, գիտակրթական ու գիտահետազոտական խնդիրների երկարաժամկետ լուծմանը [2, էջ 51]:

ՀՀ-ում հետազոտական համալսարաններ ստեղծելու և արդյունավետորեն գործառելու համագործակցային ու ինստիտուցիոնալ հիմնական **նպատակներն են՝**

- ստեղծել և զարգացնել գիտահետազոտական միջավայր, որը խթանում է միջգիտակարգային որակյալ հետազոտությունները, նորարարություններն ու տնտեսական զարգացումը,
- բարձրացնել գիտելիքների ու հետազոտությունների գիտականության մակարդակը որակյալ գիտության և հետազոտության միջոցով՝ խթանելով ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության մրցունակությունը և գիտելիքահենք հասարակության զարգացումը,
- ստեղծել գիտական հետազոտության ոլորտի արժեհամակարգը՝ թիրախային կերպով վերլուծելով և կապակցելով պետական ու մասնավոր ոլորտների և դերակատարների շահերը, կարիքները և պահանջները,
- նպաստել բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարությունների և արդյունաբերական ներունակության բարձրացման քաղաքականության թիրախային փոփոխությունների իրականացմանը,
- բարելավել գիտական անձնակազմի գիտահետազոտական գրագիտության ցուցանիշները,
- բարելավել գիտության ոլորտի ֆինանսավորման ցուցանիշները՝ բազմազանեցնելով ֆինանսավորման աղբյուրներն ու համալրելով ֆինանսական ռեսուրսները,
- բարձրացնել ներդրումային գրավչության մակարդակը՝ բարելավելով կրթության ու գիտության ոլորտներում ներդրումների ցուցանիշները և մշակելով ներդրումների ներգրավման նոր մոդելներ:

Վերոնշյալ հիմնական նպատակների իրականացումը ենթադրում է, որ հետազոտական համալսարանները ՀՀ կառավարության աջակցությամբ մեր երկրում պետք է լուծեն հետևյալ հիմնական **խնդիրները.**

➤ **բարելավել գիտահետազոտական միջավայրը.**

- մշակել գիտահետազոտական մշակույթի ամրապնդման, զարգացման և շարունակական բարելավման մեխանիզմներ՝ հիմնվելով ինստիտուցիոնալ արժեհամակարգի ու գիտական հանրույթի կարիքների վրա,
- համալրել գիտահետազոտական միջավայրը անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով և նորագույն տեխնոլոգիաներով, արդիականացնել ու թվայնացնել գրադարանային ռեսուրսներն ու ենթակառուցվածքները՝ ապահովելով անդամակցություն միջազգային կառույցներին ու գրադարանային ֆոնդերին, համալրելով մասնագիտական, մասնավորապես հայալեզու գրականությունն ու էլեկտրոնային ռեսուրսները,
- մշակել և կիրառել գիտահետազոտական գործունեության սկզբունքներ, նորմեր ու կանոններ, որոնց հիման վրա գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող անձինք կկարողանան ստեղծել արժանահավատ գիտական արդյունքներ,
- ներդնել նոր գիտելիքի ստեղծման ու որակյալ հետազոտությունների ապահովման կառուցակարգեր, ներառյալ գրագողության դեմ պայքարի մեխանիզմներ ու գործիքակազմ՝ հիմնված ակադեմիական բարեվարքության և էթիկական սկզբունքների ու նորմերի վրա,

➤ **խթանել գիտահետազոտական ոլորտում ռազմավարությունների և ոլորտային քաղաքականությունների մշակումն ու արդյունավետ իրականացումը.**

- մշակել և սահմանել հետազոտության ոլորտի հստակ գերակայություններ և առաջնահերթություններ՝ հաշվի առնելով պետության ու հանրության արդի մարտահրավերները և ՀՀ կառավարության կողմից հաստատված գերակա ուղղությունները,

- մշակել գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարություն, ոլորտային գերակա ուղղություններ, ինստիտուցիոնալ ռազմավարական նպատակների, խնդիրների և դրանց լուծմանն ուղղված գիտական միջոցառումների համալիր ծրագիր՝ շեշտադրելով ազգային կարիքները և հաշվի առնելով հետազոտության արդյունքների ներդրման հնարավորությունները,

- ներդնել գիտական անձնակազմի կառավարման հստակ քաղաքականություն, որը հաշվի կառնի պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի ներգրավման, պահպանման, կայունության ապահովման ու հոսունության նվազման խնդիրները, ինչպես նաև մասնագիտական ու սոցիալական կարիքների բավարարումը,

- մշակել ռազմավարություն թիրախային ոլորտներում երիտասարդ առաջատար մասնագետներին և գիտնականներին աշխատանքի ընդունելու համար՝ այդ ոլորտների զարգացման ու գիտական անձնակազմի գիտահետազոտական գրագիտության մակարդակի բարձրացման նպատակով,

- մշակել և արդյունավետորեն իրականացնել տաղանդների կառավարման պետական քաղաքականություն խթանելու գիտության գերակա ճյուղերում և կրթության բոլոր աստիճաններում ուսումնառող տաղանդների բացահայտումն ու նրանց ներուժի արդյունավետ օգտագործումը՝ նրանց համար ապահովելով նաև համապատասխան վերապատրաստումներ,

- խթանել արտադրության տեխնոլոգիաների, գիտահետազոտական աշխատանքների ու նորարարության զարգացման և արդյունաբերության բազմազանեցման քաղաքականության փոփոխությունները,

- զարգացնել պետության համար գերակա գիտության նոր ճյուղեր, ապահովել գիտության և հետազոտության ներդաշնակեցումն ըստ հիմնական գերակայությունների, գիտակարգերի և միջգիտակարգային բնագավառների (բնական գիտություններ, ինժեներություն, հումանիտար և հասարակական գիտություններ),

- մշակել գիտահետազոտական աշխատանքների կատարման կառուցակարգեր, ընթացակարգեր և ուղեցույցներ, որոնք կարգավորում են շահերի բախման և պայմանագրային հետազոտություններին առնչվող խնդիրները,

➤ **բարձրացնել ՀՀ գիտական համակարգի գործառնական արդյունավետությունը, բարելավել գիտահետազոտական արդյունքները, ինչպես նաև ազգային ու միջազգային մակարդակներում մեծացնել դրանց ազդեցությունը և տեսանելիությունը՝ խթանելով գիտահետազոտական համագործակցության ընդլայնումը.**

- նպաստել ՀՀ գիտակրթական համակարգի ինտեգրմանը տարածաշրջանային ու միջազգային այլ գիտակրթական տարածքներին (հիմնականում եվրոպական, ամերիկյան, ասիական, ԱՊՀ)՝ ընդլայնելով հետազոտական համալսարանների և այլ հաստատությունների համագործակցության շրջանակները, և խթանել այդ համակարգերում մրցակցային առավելության ձեռքբերումը,

- մշակել և ներդնել հետազոտական գործունեության միջազգայնացման հստակ ռազմավարություն և մեխանիզմներ, ընդլայնել գիտակրթական համագործակցության

շրջանակն ազգային ու միջազգային մակարդակներում գիտահետազոտական ու ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի դերակատարների հետ խթանելով նաև այլ հաստատությունների հետ համատեղ հետազոտական ծրագրերի իրականացումն ու արդյունքների հրապարակումը,

- ստեղծել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը կից հանրային խորհրդակցական մարմին՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների, այլ համալսարանների և ոչ ակադեմիական ոլորտի հաստատությունների (օրինակ՝ սթարթափների, ուղեղային կենտրոնների) հետ համագործակցության ձևաչափեր մշակելու, զարգացման նոր հնարավորություններ ձեռք բերելու և հետազոտության ոլորտում առկա կարիքները բացահայտելու համար,

- գործարար միջավայրում ինտեգրել գիտահետազոտական բաղադրիչը և նպաստել մասնավոր կազմակերպությունների գործունեության մեջ գիտելիքահենք արդյունքների կիրառմանը,

- բարձրացնել տեղական և միջազգային հետազոտություններում ընդգրկվածության մակարդակը՝ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող պետական համագործակցության խթանման միջոցով,

- մշակել գիտահետազոտական աշխատանքների խթանման և գիտակրթական համակարգում պետական լեզվաքաղաքականության ապահովման մեխանիզմներ՝ միտված մասնագիտական հայերենի կենսունակության պահպանմանն ու զարգացմանը,

- մշակել և իրականացնել գիտահետազոտական աշխատանքների մարքեթինգային քաղաքականություն, ներառյալ՝ շուկայում սեփական մրցակցային դիրքի տեղորոշում և ամրապնդում, մրցակիցների նկատմամբ շուկայում ունեցած մասնաբաժնի ու մրցակցային դաշտում դիրքի փոփոխության միտումների սահմանում,

- խթանել միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում հրապարակումների քանակական ցուցանիշների և միջազգային գիտաժողովներում համալսարանների գիտական անձնակազմի ներգրավվածության թվի բարձրացումը, ինչպես նաև այդ հրապարակումների տեսանելիության աստիճանը,

➤ **ստեղծել նպաստավոր ներդրումային միջավայր և հետազոտական համալսարանների համար ապահովել ֆինանսական կայունություն,** մասնավորապես՝

- նպաստել գիտության ոլորտի պետական ֆինանսավորման ռազմավարության մշակմանը, որը պետք է նպատակաուղղված լինի գիտահետազոտական արտադրողականության, գիտական արդյունքների որակի և մրցունակության ապահովմանը՝ հաշվի առնելով պետության ռազմավարական ու տնտեսական առաջնահերթությունները,

- մշակել ներդրումային քաղաքականություն և գործիքակազմ՝ միտված ներդրումային գրավչության մակարդակի բարձրացմանը և կրթության ու գիտության ոլորտներում ներդրումների ցուցանիշների բարելավմանը,

- մշակել եղանակներ՝ հետազոտական ծրագրերի համար արտաքին ֆինանսական աղբյուրներ և օժանդակություն ապահովելու համար,

- մեծացնել գիտության բնագավառում պետության նպատակային ներդրումների՝ ՀՀ պետական բյուջեով նախատեսված ծավալը և բարձրացնել բուհերի գիտահետազոտական աշխատանքներին տրամադրվող պետական ֆինանսավորման ցուցանիշները.

- կարճաժամկետ ժամանակահատվածում՝ մինչև 2025 թվականը, ՀՀ պետական բյուջեում 20%-ով ավելացնել գիտական հետազոտություններին հատկացվող ծախսերը և բարձրացնել

առանցքային ցուցանիշներն ու վերահսկել գիտության զարգացմանն ուղղված ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,

- միջնաժամկետ ժամանակահատվածում՝ մինչև 2030 թվականը, մեծացնել գիտությանը հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը մինչև ՀՀ ՀՆԱ-ի 3 %,

- երկարաժամկետ ժամանակահատվածում՝ մինչև 2040 թվականը, մեծացնել գիտությանը հատկացվող ֆինանսական միջոցների ծավալը մինչև ՀՀ ՀՆԱ-ի 5 %,

- ստեղծել և արդյունավետորեն գործառել անձեռնմխելի ֆոնդեր, որոնք կարող են կայուն ֆինանսական հոսքեր ապահովել գիտակրթական ու փորձագիտական-վերլուծական կառույցների համար,

- խթանել նորարարական հիմնադրամների կազմավորման, գործունեության և վենչուրային կապիտալի (փոքր և միջին ձեռնարկություններում առանց գրավի երաշխիքի կատարված ներդրումներից ստացված կապիտալ) ձևավորմանն ու շրջանառության օրենսդրական հիմքերի փոփոխությունների իրականացումը,

- ստեղծել ֆինանսավորման ապակենտրոնացված մոդել՝ խթանելով գիտության ոլորտում ցանցային ենթակառուցվածքների ամրապնդումը, հնարավորություն տալով համապատասխան գիտահետազոտական ենթակառուցվածքներին դառնալու ծախսային կենտրոններ և ռեսուրսները բաշխելու ըստ իրենց ռազմավարական առաջնահերթությունների,

- ապահովել ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող (բազային ֆինանսավորում, նպատակային ֆինանսավորում, թեմատիկ ֆինանսավորում) գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հանրային վերահսկողությունը և բարձրացնել տվյալ ոլորտի ցուցանիշները,

- մշակել ներդրումների եկամտաբերության գործակցի հաշվարկման համապատասխան մեթոդաբանություն և դրա կիրառման գործիքակազմ՝ ներդրումների կատարման անհրաժեշտությունը և իրաչափությունը որոշելու նպատակով,

- մշակել հարկային արտոնությունների շրջանակ արդյունաբերության/արտադրության հետ համագործակցության համար խթանելով հետազոտական համալսարանների, կրթության և գիտության պետական համակարգերի և տարածաշրջանի գրավչությունն ու մրցակցային առավելությունը,

- բարձրացնել ֆինանսավորման աղբյուրների հայթայթման և համագործակցության հնարավորությունների մասին իրազեկվածության մակարդակը՝ նախաձեռնելով թիրախավորված միջոցառումներ ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցմանն ու նոր աղբյուրների հայթայթման նպատակով,

➤ **բարելավել գիտահետազոտական համակարգի ցուցանիշները բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ գործառման և զարգացման միջոցով.**

- մշակել SՏՏ-ներով կազմակերպվող կրթության և գիտահետազոտական աշխատանքների որակի ապահովման չափանիշները և բարելավել այդ ոլորտի առկա ցուցանիշները,

- խթանել SՏՏ և բարձր տեխնոլոգիական կազմակերպությունների կողմից պահանջվող մասնագետների (պահանջարկ) և երկրի բարձրագույն կրթության համակարգի միջոցով պատրաստվող մրցունակ մարդկային ռեսուրսների կարողությունների ու հմտությունների (առաջարկ) համամասնությունը,

- ապահովել S2S հմտություններին տիրապետող կրտսեր և ավագ գիտաշխատողների թվի համամասնությունը՝ ըստ հմտության տեսակի,
- Բարձրացնել տեղեկատվական ոլորտների (ներառյալ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության, ծրագրավորման, բնագիտական, ագրոկենսատեխնիկական, թափոնների վերամշակման, կենսաէներգետիկ աղբյուրները, սննդի արդյունաբերության, կենսադեղագործական և այլ առաջնահերթ բնագավառների) արտադրանքի և ծառայությունների արտահանման ցուցանիշները,
- Բարելավել տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաների ներմուծման ցուցանիշները՝ հաշվի առնելով կրթության ձևերի բազմազանեցման և մրցակցային առավելության ձեռքբերման անհրաժեշտությունը:

Հետազոտական համալսարանների ստեղծմանը, գործառնմանը և մրցունակության բարձրացմանն ուղղված վերոնշյալ նպատակների իրականացմանն ու խնդիրների լուծման գործընթացները կարող են արդյունավետ լինել, եթե այդ համալսարանները կարողանում են արդյունավետորեն գործառել իրենց կառավարման համակարգերը: Համալսարանների կառավարումը պետք է նպաստավոր գիտակրթական և գիտահետազոտական միջավայրերի ստեղծման հիմք լինի:

Հետազոտական համալսարանները կարող են էապես խթանել իրենց գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը՝ հիմնվելով հետևյալ ինստիտուցիոնալ բաղադրիչների և գործընթացների գործառնման վրա [4].

✓ *ինստիտուցիոնալ կառավարման արդյունավետ համակարգ.* կառավարման ապակենտրոնացված համակարգեր և կազմակերպական ճկուն կառուցվածք ունեցող համալսարաններն առավել նպաստավոր պայմաններ են ստեղծում գիտահետազոտական գործունեության զարգացման համար: Ընդ որում, այդպիսի կառավարման համակարգերը ենթադրում են նաև մասնակցային որոշումների կայացում, առանցքային շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ակտիվ կիրառում՝ հիմնված պետական, հանրային ու կազմակերպական (կորպորատիվ) շահերի համադրման և հստակորեն սահմանված ռազմավարական նպատակների վրա,

✓ *ռազմավարական նպատակների սահմանում.* համալսարանների ռազմավարական նպատակները, դրանց համար հիմք հանդիսացող ինստիտուցիոնալ արժեքահամակարգն ու սկզբունքները պետք է համալսարանների ներքին ու արտաքին առանցքային շահակիցների համար լինեն համընդունելի, տեսանելի և համախմբող,

✓ *կազմակերպական բարենպաստ մշակույթ.* համալսարանների ներքին ու արտաքին առանցքային շահակիցները պետք է ֆիդուցիար հարաբերությունների և սեփական հանձնառության հիման վրա որդեգրեն համընդհանուր արժեքահամակարգ, ներառյալ գիտական հետազոտության ոլորտում սահմանված արժեքները, չափանիշներն ու էթիկայի նորմերը, փորձառությունը, ինչպես նաև հիմնվեն այն համոզմունքի վրա, որ իրենց գաղափարներն ու նորարարությանն ուղղված առաջարկները լսելի կլինեն տվյալ հաստատության ղեկավարության և որոշումներ կայացնողների կողմից,

✓ *միջանձնային բարիդրացիական հարաբերությունների ապահովում.* գիտահետազոտական գործունեության արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է համալսարանների ներկազմակերպական այնպիսի մթնոլորտով, որը խրախուսում է բաց ու կառուցողական համագործակցություն, ստեղծում է բարոյահոգեբանական առողջ միջավայր ստեղծագործական աշխատանքների իրականացման համար, խթանում է նորարարական գաղափարների փորձարկումն ու իրականացումը, ապահովում է

ղեկավարության կողմից շարունակական աջակցությունը և այդպիսով խթանում նաև մարդկային ռեսուրսների պահպանման բարձր ցուցանիշներ,

✓ *հետազոտահենք գործունեության իրականացում.* գիտահետազոտական գործունեությունը անպայման պետք է լինի ռազմավարական առաջնահերթությունների շարքում կամ մյուս ոլորտների համեմատ առավել մեծ կշիռ ունենա, ինչպես նաև հիմնված լինի էմպիրիկ և հավաստի տվյալների վրա,

✓ *համագործակցային կապերի ամրապնդում և ընդլայնում.* գիտական հետազոտության ոլորտում համալսարանները շարունակաբար և հետևողականորեն պետք է կապեր հաստատեն այլ ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական ինստիտուտների, լաբորատորիաների, սթարթափ կազմակերպությունների և այլ կառույցների հետ, ինչի շնորհիվ հետազոտական համալսարանները կարող են ապահովել իրենց գիտահետազոտական աշխատանքների արդյունքների գիտահանրահասանելիությունն ու առևտրայնացումն ազգային ու միջազգային մակարդակներում,

✓ *գիտահետազոտական աշխատանքների կատարման խթանում.* համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այդ հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների կողմից սահմանված և ղեկավարության կողմից գիտահետազոտական աշխատանքների համար նախատեսված պարզևատրման ու խրախուսման (ֆինանսանյութական և ոչ նյութական) քաղաքականություններով ու համակարգերով, ինչպես նաև խրախուսման ինստիտուցիոնալ այնպիսի չափանիշների ու մեխանիզմների նպատակային կիրառմամբ, որոնցով համալսարաններն ապահովում են խրախուսման անաչառություն ու հավասար պայմաններ գիտահետազոտական աշխատանքների գնահատման համար,

✓ *պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի մասնագիտական զարգացում.* հետազոտական համալսարանները մեծ ջանքեր պետք է գործադրեն և համապատասխան ռեսուրսներ տրամադրեն որակյալ գիտական կազմի և մասնագետների համալրման ու պատրաստման, կադրային ներուժի բացահայտման, մասնագիտական զարգացման և գիտահետազոտական գրագիտության, հանձնառության աստիճանի բարձրացման և նրանց կատարողականի պարբերական գնահատման ուղղությամբ: Մասնագիտական զարգացման հնարավորությունները համալսարանների գիտահետազոտական գործունեության արդյունավետության առանցքային նախապայմաններից են, և համալսարանները պետք է ապահովեն դրանք՝ խթանելով իրենց պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի կատարողականի բարելավումը և գիտահետազոտական նոր արդյունքների ստեղծումը,

✓ *պրոֆեսորադասախոսական և գիտական կազմերի բեռնվածության իրաչափ բաշխում.* հետազոտական համալսարանները պետք է իրաչափորեն բաշխեն իրենց առանցքային այն շահակիցների (պրոֆեսորադասախոսական և գիտական կազմի) բեռնվածությունը, որոնց գիտահետազոտական ներուժը շարժիչ ուժ է այդ հաստատությունների գիտահետազոտական գործունեության կայուն զարգացման ու հեռանկարային բարելավման համար՝ նրանց տրամադրելով ստեղծագործական և գիտահետազոտական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ժամաքանակ ու ռեսուրսներ:

Եզրակացություն: Այսպիսով, ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծումն ու գործառույթը կարող են համախմբել գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում ունեցած մրցակցային

առավելությունները, իրանել գիտելիքահենք տնտեսության զարգացումը և գիտահետազոտական գերազանցությունը տարբեր գիտակարգերում: Հետազոտական համալսարանները կարող են նաև նպաստել պետության և տնտեսության գերակայությունների ուղղությամբ հետազոտությունների իրականացմանը, տնտեսության մրցունակության բարձրացմանը և գիտակրթական անվտանգության ապահովմանը: Միաժամանակ դրանք պետք է ունենան իրականացված հետազոտությունների արդյունքներն ու գիտական գիտելիքն ազգային և միջազգային մակարդակներում տարածելու հանձնառություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Բարձրագույն և հետրոհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք (2004 թ. դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն)
2. Խաչատրյան Ռ., *Հետազոտական համալսարանների անհրաժեշտությունը ՀՀ կրթական համակարգում*, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան, Կրթության կառավարում, «Բանբեր», 2012, 2(22), էջեր 42-53:
3. American Academy of Arts and Sciences 2015. *Public Research Universities: Why They Matter*. The Lincoln Project: Excellence and Access in Public Higher Education, Cambridge, MA.
4. Hanover Research 2014. *Building a Culture of Research: Recommended Practices*. Academy Administration Practice.
5. Sadlak J. & Cai L. N. (Editors) 2009, *The World-Class University as Part of a New Higher Education Paradigm: From Institutional Qualities to Systemic Excellence*. UNESCO European Centre for Higher Education. Shanghai Jiao Tong University, Cluj University Press.

СТРАТЕГИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ ВУЗОВ В КОНТЕКСТЕ ПЕРСПЕКТИВНОГО РАЗВИТИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Хачатрян Роберт

Государственный университет имени В. Брюсова, Армения

Аннотация

Исследовательские университеты являются ключевыми игроками в сфере высшего образования, способствующими социально-экономическому развитию страны, внося значительный вклад в развитие научных и технологических сфер посредством проведения фундаментальных исследований. Исследовательские университеты дополняют накопленный опыт и научные знания в различных сферах деятельности новыми результатами исследований, создают новые стратегии экономического развития, основанные на знаниях, общественные блага, обслуживая потребности науки, образования, рынка труда и общества. В этом контексте подчеркивается стратегическая важность создания исследовательского университета в Республике Армения (РА), с одной стороны, с точки зрения укрепления связи науки, образования и экономики, а с другой стороны – содействия развитию исследований и инноваций в РА.

Ключевые слова: исследовательский университет, экономика, основанная на знаниях, стратегическое развитие, высшее образование, научные кадры, научные знания.

Список использованной литературы

1. Закон Республики Армения о высшем и послевузовском профессиональном образовании (62-Н, 14.12.2004)
2. Хачатрян Р., Потребность исследовательских университетов в образовательной системе Республики Армения, Ереванский государственный лингвистический университет имени В. Я. Брюсова, Управление образованием: Вестник 2 (22), 2012, с. 42-53.
3. Американская академия искусств и наук, 2015 г. Государственные исследовательские университеты: Почему они важны. Проект Линкольна: Превосходство и доступ в государственном высшем образовании, Кембридж, Массачусетс.
4. Гановер Рисерч 2014. Создание культуры исследований: Рекомендуемая практика. Практика управления академией.
5. Садлак Дж. и Цай Л. Н. (редакторы) 2009. Университет мирового уровня как часть новой парадигмы высшего образования: От институциональных качеств к системному совершенству. Европейский центр высшего образования ЮНЕСКО. Шанхайский университет Цзяо Тонг, Университетский пресс Клуз.

STRATEGIC SIGNIFICANCE OF RESEARCH UNIVERSITIES IN THE DEVELOPMENT PROSPECTIVE OF HIGHER EDUCATION AND SCIENCE IN THE REPUBLIC OF ARMENIA

Khachatryan Robert

Summary

Research universities are the key role players in the field of higher education that foster the socio-economic development of the country by significantly contributing to the development of scientific and technological spheres through fundamental research. Research continuously enrich their accumulated experience and scientific knowledge in various fields of activity with new research outcomes, create public good and new strategies of knowledge-based economic development with the aim to ensure that they serve for the needs of science, education, labor market and society.

In this context, the strategic significance of establishing research universities in the Republic of Armenia (RA) is highlighted in the current article. In particular, it is substantiated in terms of strengthening the science-education-economy link in the RA, on the one hand, and from the perspective of promoting the development of research and innovation, on the other hand.

Keywords: research university, knowledge-based economy, strategic development, higher education, research staff, scientific knowledge.

References:

1. Law on "Higher and Postgraduate Professional Education" of the Republic of Armenia (62-N, 14.12.2004).
2. Khachatryan R. On Exigency of Research Universities in the RA Educational System. Yerevan State State Linguistic University after Brusov, Education Management, Banber 2(22), 2012, 42-53.
3. American Academy of Arts and Sciences 2015. *Public Research Universities: Why They Matter*. The Lincoln Project: Excellence and Access in Public Higher Education, Cambridge, MA.
4. Hanover Research 2014. *Building a Culture of Research: Recommended Practices*. Academy Administration Practice.
5. Sadlak J. & Cai L. N. (Editors) 2009. *The World-Class University as Part of a New Higher Education Paradigm: From Institutional Qualities to Systemic Excellence*. UNESCO European Centre for Higher Education. Shanghai Jiao Tong University, Cluj University Press.

Материал был представлен и отправлен на рецензию: 16.10.2021

Принято к публикации: 07.11.2021

Рецензент: канд.пед. наук, доцент Грета Акопян

The material was submitted and sent to review: 16.10.2021

Was accepted for publication: 07.11.2021

Reviewer: Assoc. Prof., Ph.D. Greta Hakobyan